ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԳՅՈՒՂԻ 2-ՐԴ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ

2024 թվականի հունիսի 12-ին Արմավիր համայնքի ղեկավար Վարշամ Սարգսյանն Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի վարչական ղեկավարի նստավայրում անցկացրեց հանրային լսում՝ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի 2-րդ հողամաս հասցեում ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի կառուցման գործունեության վերաբերյալ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ հանրային լսման նպատակն է բնակչությանը ներկայացնել ծրագրի նախագիծը, ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն: Նա ներկայացրեց նմանօրինակ նախագծի կարևորությունը, նշեց որ ծրագրի իրականացումը բազմաթիվ աշխատատեղեր կստեղծի համայնքում՝ մասնավորապես Մյասնիկյան գյուղում, կնպաստի երեխաների կարողությունների զարգացմանը, նոր հետաքրքրությունների բացահայտմանը, բնակիչների աշխարհընկալման փոփոխությանը. և փաստեց, որ այս ծրագիրը համայնքի համաչափ զարգացման լավագույն այցեքարտերից մեկն է:

Այնուհետև Արմավիրի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի նախագծի ղեկավար Արթուր Տեր-Սիմոնյանը ներկայացրեց նախագծային լուծումները, աշխատանքների կատարման ժամկետները: Իսկ ՇՄԱԳ փորձագետ Տիգրան Օգանեզովը պարզաբանեց կենտրոնի կառուցման շինարարության ընթացքում փոշու և տեխնիկաների վառելիքի այրման արտանետումների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ նշելով, որ այդ ամենը խիստ տեղային է լինելու և աշխատանքների կատարման ընթացքում դրանք հնարավորինս չեզոքացվելու են:
Հանրային լսման մասնակիցների կողմից հնչեցին հարցեր, թե արդյոք շինարարության ընթացքում հնարավոր կլինի ներգրավել գյուղի մասնագետներին, որպեսզի նրանք ստիպված չմեկնեն արտագնա աշխատանքի, ինչին ի պատասխան՝ ծրագրի ղեկավարը հաստատեց դրա հնարավորությունը: Հաջորդ հարցն ուղղված էր գյուղամիջյան ճանապարհի (դեպի ՔՈԱՖ) հիմնանորոգմանը, որին ի պատասխան համայնքի ղեկավարը նշեց, որ ծրագրի իրականացման արդյունքում դա օրակարգային և առաջնահերթ հարց է լինելու համայնքապետարանի համար:

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

Արձանագրող՝ ԹԱՄԱՐԱ ՇԱՌՈՅԱՆ

12.06.2024թ.